БЕССМЕРТНЫЙ ПОЛК

ԱՆՄԱՀ ԳՈՒՆԴ

N 05

« 06 » ապրիլի 2026 թ.

Հեռ. + 374 33 – 00 – 19 - 45
Էլ.փոստ: bessmertnipolkarmenii@mail.ru
Հասցե՝ ք.Երևան – 0070, Վարդանանաց փ, շ.15/4

Երևանի քաղաքապետ՝ պարոն Տիգրան Ավինյանին

«Անմահ գունդն արտասահմանում» պատմամշակութային հասարակական կազմակերպությունը նախատեսում է 2026 թվականի մայիսի 9-ին կազմակերպել Հայրենական մեծ պատերազմում մեր նախնիների՝ մեր պապերի ու հայրերի հաղթանակի 81-րդ տարեդարձին նվիրված «Անմահ գնդի» ավանդական հաղթական քայլերթը դեպի «Հաղթանակ» զբոսայգի:

Քայլերթի մասնակիցները (5,000-7,000 մարդ) մայիսի 9-ին, ժամը 11:00-ին, կհավաքվեն Երևանի Արաբկիր վարչական շրջանի Սբ. Խաչ եկեղեցու բակում, որտեղից ժամը 12:30-ին, «Անմահ գնդի» կազմում, հաղթանակած մասնակիցների լուսանկարները ձեռքներին, դրոշներով և պաստառներով, մոտավորապես հարյուր կարգադրիչի ուղեկցությամբ, Ազատության պողոտայով կշարժվեն դեպի «Հաղթանակ» զբոսայգի՝ մասնակցելու ժամը 13:00-ին Անմար կրակի մոտ տեղի ունենալիք ծաղիկների և պսակների դրվագման հանդիսավոր արարողությանը, որը կավարտվի ժամը 13:30-ին:

Այս գրությամբ մենք Ձեզ տեղեկացնում ենք «Անմահ գնդի» քայլերթի մասին և խնդրում ենք Ձեզ՝ ժամը 12:30-ից մինչև 13:00-ն դադարեցնել ավտոմեքենաների երթևեկությունը Ազատության պողոտայի մի ուղղությամբ (Սբ. Խաչ եկեղեցուց մինչև «Հաղթանակ» զբոսայգու գլխավոր մուտք) և ապահովել երթի մասնակիցների անվտանգությունը Երևան քաղաքի ոստիկանության և «Շտապ օգնության» ծառայության միջոցով:

Գրությանը կից ներկայացնում ենք «Անմահ գունդն արտասահմանում» պատմամշակութային հասարակական կազմակերպության ժողովի որոշումը:

Հարգանքով,

«Անմահ Գունդը արտասահմանում» պատմամշակութային հասարակական կազմակերպության

Գործադիր տնօրեն՝

Է.Ռ. Հովհաննիսյան _____